ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անուն(ներ)ը, Ազգանուն(ներ)ը

Արայիկ Հարությունյան

Արևիկ Անափիոսյան

2. Զբաղեցրած Պաշտոն(ներ)ը

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ

3. Գործուղման Վայրը և Ժամկետները

Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն (Լոնդոն)՝ հունվարի 19-22-ը:

4. Հրավիրող Կողմը

Միացյալ Թագավորության կրթության պետական նախարար Դամիան Հայնդզի հրավերով

5.Գործուղման նպատակը (Աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Լոնդոնում կայանալիք Համաշխարհային կրթական ֆորումին մասնակցելու նպատակով

6. Հանդիպումները, Ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Ս. թ. հունվարի 20-ին կայացել է հանդիպում Մեծ Բրիտանիայի նախկին ԿԳ նախարար Չարլս Քլարքի հետ: Հանդիպման ժամանակ քննարկվել են կրթական բարեփոխումները, ներկայացվել է նաև ուսուցիչների վերապատրաստման հնարավոր սխեմաները:
Ս. թ. Հունվարի 21-ին կայացել է հանդիպում Գերմանիայի Դաշնային Հանրապետության մշակութային նախարարական համագումարի գլխավոր քարտուղար Ուդո Միխալիկի հետ: Քննարկվել են միջին մասնագիտական կրթության և ուսուցման,ինչպես նաև բարձրագույն ուսումնական հաստատությունների բարեփոխումների հետ կապված արդյունքները և խնդիրները:

Ս. թ. հունվարի 22-ին կայացել է «Transforming Learning through Partnership Clinic» միջոցառումը, որի ընթացքում տեղի է ունեցել հանդիպում Հարավային Կորեայի կրթության նախկին նախարար և ներկայիս «Համաշխարհային կրթության հնարավորությունների ֆինանսավորման» հանձնաժողովի կրթության հարցերով հանձնակատար Ջու-Հո Լիի հետ:

Կայացել է այցելություն «Տորիանո» տարրական դպրոց, որտեղ պատվիրակության անդամները ծանոթացել են կրթական ծրագրի STEM բաղադրիչին, դպրոցի տնօրինության հետ քննարկել է համայնքահեն կրթական ծրագրի ձևավորման կարևորությունը: Միացյալ Թագավորության այս տարրական դպրոցում կազմակերպվում է 1-6-րդ դասարանների կրթություն: Սովորողները տարբեր առարկաների շրջանակում ուսումնասիրում են համայնքային խնդիրները, ինչպես նաև «Տեխնոլոգիա» առարկայի միջոցով սովորում անհրաժեշտ ծրագրավորում՝ խնդիրների լուծման համար:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը:

Նախարարական հանդիպումների ընթացքում քննարկվել են նաև այնպիսի հարցեր, ինչպիսին են կրթության միջազգայնացման և շարժունության խթանման ուղիները:

Համաշխարհային կրթական ֆորումի ընթացում հիմնականում ծավալվել են քննարկումներ միջին մասնագիտական կրթության և ուսուցման շրջանակներում համագործակցության վերաբերյալ: Հանդիպմանը ներկա են եղել նաև տարբեր երկրների բարձաստիճան պաշտոնյաներ և կրթության նախարարներ, որոնք կիսվել են իրենց երկրների բարեփոխումների ձեռքբերումներով և առկա խնդիրների լուծումներով:

8. Ստորագրությունը, ամսաթիվը

29.01.2020